Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

ԳԼՈՒԽ Ա ՅՈՐՈՒՄ ԿԱՅ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՅՆՈՑԻԿ, ՈՐ ԲԱՄԲԱՍԵՆ ԶՄԵԶ, ԵԹԷ ՉԿԱՅ ԴԱՏԱՍՏԱՆ Ի ՀԱՅՔ

Հանդերձեալ գրել զգիրս դատաստանաց, բայց պատշաճաւորաբար նախ զընդդիմադրութիւն դիցուք պարսաւողաց զօրէնս Տեառն, եթէ դատաստան ոչ է, զի յոլովք քան զսակաւս են, որոց գործ եւ բան եղեւ պատուել զայլասեռս՝ իրաւացի ունել դատաստանս, եւ զի ինքեանք գայթակղեալք՝ զբազումս գայթակղեցուցանեն սոքօք ի պարզամտացն, որոց եւ զայս նախ ասասցուք, եթէ բնաւորական է ի մեզ ընտրել զիրաւացին ի սկզբանէ, ըստ որում եւ իմաստունք հեթանոսաց զչաստուածանարգս մահուամբ դատեցան եւ զհայրատանջսն՝ ձեռնատմամբ եւ զայլսն՝ այսպիսի ուղղացի դատաստանաւ: Իսկ անօրէնքն առաւելութեամբ վարին, առեալ զպատճառն ի բնաւորական օրինաց՝ մահու մեռանիլ հայրանարգին եւ յայլսն նմանապէս:

Այլ Աւետարան Փրկչին մերոյ լրումն է ամենայնի երկոցունցն, յաղագս որոյ հրամայէ՝ ասացաւ յառաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ ձեզ զայս ինչ Զի որպէս Օրէնքն եւ Աւետարանն հրամայել են, մարդիք մոռացեալ զբնաւորական օրէնսն կատարել են, սակայն զիշխանական կամսն ոչ բառնան, ասելով առաջնոցն՝ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո, զի բնաւորական է գիտելով զանձն քո ի սէր: Եւ երկրորդն, մանաւանդ թէ առաջինն, ի կամս ապաստան առնէ զաշխատութիւնն եւ զայլ եւս ուղղութիւն, որովք հաստատի ի մեզ լինել իրաւամբք առ ամենեսեան վարիլ, յաղագս որոյ ոչ Աւետարանն ի սկզբանն գրով աւանդեցաւ:

Եւ երկրորդ է՝ արկանել օրէնս կատարեալս ի մէջ կատարելոց եւ ոչ կամեցաւ զօրէնս կատարեալ գրով աւանդել դատաստան, ըստ որում խրատէր՝ ի ճանապարհի հաշտիլ ընդ ոսոխի, զի մի՛ ի դատաստան մտանիցի դատաւորին: Եւ երբեմն անիրաւ դատաւորին առակաւ յայտնի եցոյց զամենայն ինչ վճարել խղճիւն մտաց, զոր դատաւոր կոչեաց. նմանապէս եւ զիրս դատաստանի: Զսոյն եւ յառակսն նշանակեաց տնտեսին, թէպէտ եւ յառաջնումն անիրաւ, սակայն յետոյ գովելի՝ զղջմամբն, որով ոչ եմուտ յատեան դատաստանի տալ զհաշիւն. ասելովն, թէ՝ տուր զհամար տնտեսութեան քո, եցոյց հարկաւոր լինել դատաստանի, իսկ գովելովն՝ եթէ հնար է ոչ կարօտանալ դատաստանի: Այսորիկ աղագաւ հրաժարեաց առնել զդատաստան այնմ, որ աղաչեաց, եթէ՝ ասա եղբօր իմոյ բաժանել ընդ իս զժառանգութիւն, իբրու թէ ասիցէ՝ կրկնապատիկ ունիք զպատճառն ձեզէն ընտրել զիրաւացին, ընդէ՞ր այլոյ կարօտիք դատաստանի: Յայսմանէ ուսաւ առաքեալն՝ ասելով. զի բնաւ իսկ դատաստան գոն ի ձեզ, ընդէ՞ր ոչ դուք զրկիք եւ նեղիք, այլ դուք զրկէք եւ նեղէք, եւ այդ՝ զեղբարս եւս: Եւ երրորդ՝ կամեցաւ Քրիստոս, զի մի՛ հարկաւորաբար յիրաւունս կայցեմք ի միմեանս գրով դատաստանի, այլ սիրով եւ վշտակցութեամբ, ըստ զանազան ժամանակի անգիր օրինօք, զարդարութիւն պահիցեմք:

Չորրորդ՝ զի բաւական համարեցաւ, զի զբանս օրինացն Մովսիսի եւ զիւր Աւետարանին իբր սերմն լինել յոգիս մեր, եւ նովաւ վարիլ յարժանիս դատաստանին:

Հինգերորդ՝ զի ոչ նման է իրք դատաստանին Օրինաց, կամ Մարգարէից, կամ Աւետարանին անշարժութեան, այլ զի միշտ ըստ ազգի եւ աշխարհաց փոփոխին հարկաւորաբար՝ իրաւացոյց թողուլ հմտագունից փորձել ըստ պատահմանն: Վեցերորդ՝ գրէ, եթէ երդմամբ հաստատի դատաստան, եւ Տէր արգել, կամելով բնաւին հաւատացեալս զմեզ:

ԳԼՈՒԽ Բ ՅԱՂԱԳՍ ԹԷ ԸՆԴԷ՞Ր ԱՅԺՄ ԳՐԵՑԱՔ ԿԱՄ ՅՈՒՄՄԷ ՇԱՐԺԵԱԼՔ

Զի թէպէտ ասացաւ ոչ լինել հարկաւոր գրով աւանդիլ մեզ դատաստան ի Տեառնէ, այլ այժմ կամեցաք, յաղագս զի բազում անգամ լուաք պարսաւանս ոչ յայլասեռից միայն, այլ եւ ի քրիստոնէից, եթէ բնաւին ըստ Աւետարանին դատաստան ոչ է՝ անգիտանալով զկամս աստուածայինս, որ ի նոսա: Եւ այսպիսի կարծիք երկուս ախտանայ չարս. մի՝ զանիմաստութիւն օրինադրին, եւ երկրորդ՝ ոչ կամել զուգահաւասար կենցաղավարել մարդկան ազգի:

Եւ երկրորդ՝ զի զբնաւորականս ի մեզ օրէնս չարութիւնն շիջոյց, եւ զկատարելութիւն՝ անկատարութիւն հոգոյն, եւ զվշտակցութիւն սիրոյ՝ ատելութիւնն:

Երրորդ՝ զի ի հեղգութենէ անվարժք եղեալք Օրինաց, եւ Մարգարէից, եւ Աւետարանին, յորոց զօրութենէ անկարացաք ընտրել զիրս դատաստանի, զոր արժան վարկաք իբր ի քնոյ զարթուցանել ի ձեռն գրոց դատաստանի:

Չորրորդ՝ զի նուազեաց հմտութիւն ի մէնջ փորձել ըստ ժամանակի, եւ ազգի, եւ աշխարհաց զփոփոխելն ըստ պատահման, եւ ոչ նման Օրինաց, եւ Մարգարէից, եւ Աւետարանին մնալ անշարժ:

Հինգերորդ՝ զի այժմ ոչ ներգործէ Հոգին Սուրբ, որպէս եւ ի Դանիէլ եւ ի Սողոմոն երբեմն եւ կամ որպէս ի Կորնթոս ի հաւատացեալսն եւ յայլս՝ ճշմարտիւ ունել զդատաստանն, յաղագս որոյ անկարօտ էին գրոյ օրինաց, զի օրէնք էին ի սիրտս նոցա, ըստ խոստման մարգարէին: Ըստ որում եւ առաքեալքն ոչ կամեցան գրով տալ Աւետարան, մինչեւ այնմ կարօտացան, ըստ այնմ եւ ոչ դատաստան գրով աւանդեցին, քանզի փոյթ էր նոցա յաղագս յոյժ հարկաւորացն, թողին եւ նոքա բնաւորական օրինօք, եւ քաղաքական կրթութեամբ, եւ այլօք յառաջագոյն ասացելօք վարիլ պատճառօք: Իսկ գրելն այժմ զպատճառս ունի զամենայն վրիպանսն:

Վեցերորդ՝ զի իրք դատաստանի երդմամբ յանգի, եւ ի Տեառնէ ոչ թողացաւ, եւ այժմ յաճախ, եւ գործ առ գործով, եւ վայրապար ի դատաստանի, եւ առանց դատաստանի, լինի ի հաւատացեալս: Նմին իրի կամեցաք ոչ զամենայն լուծանել զիրաման, այլ լուծելոյն օրէնս եւ կանոնս հաստատել ի դատաստանի, ըստ հարկաւորութեան ներելոյն զդատաստանի: Եւթներորդ՝ զի մի՛ ի պատճառս

ոչ գրով լինել դատաստան՝ դիմեալ երթիցեն յայլասեռս, ըստ ամբաստանելոյ մարգարէին՝ առ ի չգոյէ՞ Աստուած ի մէջ Իսրայէլի երթան հարցանել ի Ճանճիկ. զոր եւ առաքեալն յայտնապէս յանդիմանէ, ասելով՝ այլ եղբայր ընդ եղբօր դատի եւ զայն՝ ի մէջ անհաւատից:

Ութերորդ՝ տեսանեմք այժմ, զի բազումք յեպիսկոպոսաց, եւ ի վարդապետաց, եւ ի քահանայից, եւ ի գլխաւոր աշխարհականաց ընդ երեսաց եւ վասն կաշառոց եւ տգիտութեամբ թիւրեն զդատաստանս ճշմարիտս: Եւ վասն այնորիկ յօժարեցաք գրել զդատաստանաց գիրքս:

Իններորդ՝ զի մարդոյ բնութիւնս ի շատ հոգոց եւ ի զբաղանաց եւ ի ցնորից, թէ կամենամք եւս զըղորդ դատաստանն առնել, ոչ կարեմք ի մոռացմանէ, ապա յետոյ դառնամք ապաշաւեմք եւ ասեմք՝ միթէ արարաք ըղո՞րդ, թէ ոչ: Այլ զի մի՛ այս լիցի ի միջի մերում, վասն այնորիկ գրեցաք զգիր դատաստանիս, զի մի՛ կարծեօք դատիցիմք եւ մի՛ դիմեսցուք յայլազգիս ի դատաստան, այլ կարկեսցուք զբերանս նոցա, զի մի՛ դարձեալ հերձուածս խօսին մեզ, թէ ոչ ունիմք գիր իրաւանց: Եւ զի նոքա ի մէնջ են ուսեալ եւ գրեալ, ապա զբարիոք գրեալսն չարաչար ընթեռնուն: Տասներորդ՝ քանզի յորժամ ստեղծ Տէր Աստուած զԱդամ, շնորհք Սուրբ Հոգոյն զօրանայր ի մեզ օր աւուր վերայ: իսկ սատանայ ասաց, թէ ոչ մնաց հոգի Աստուծոյ ի մարդիկ վասն յանցանացն, որ մեղան ի դրախտն Աստուծոյ: Եւ վասն այսորիկ Քրիստոս մարմնացաւ ի կուսէն եւ գրեաց մեզ զԱւետարանն փրկութեան եւ կանոնս ի ձեռն սուրբ հարցն մերոց, որք ի Հոգոյն Սրբոյ գիտացին զմարմնոյ կիրք եւ զբիծ եւ գրեցին զհոգեւոր դեղն: Մետասաներորդ՝ զի դատաւորք միշտ երկիցեն յԱստուծոյ՝ գիտելով, զի կալոց են առաջի դատաւորին երկնաւորի, եւ ճշմարիտ եւ ուղիղ գրով արասցեն զդատաստան մարդկան: Երկոտասաներորդ՝ զի մարդիկ, որ գան առաջի դատաւորաց, երկիցեն յԱստուծոյ եւ ոչ կաշառեն զդատաւորս եւ թիւրել տայցեն զճշմարիտ դատաստանն, քանզի ծածկագէտն Աստուած տեսանէ զգործս նոցա, եւ առաջի նորա կալոց եմք ի դատաստան: Եւ որք այժմ թիւրեն կաշառօք դատաւորք եւ դատաստանաւորք, առաջի Քրիստոսի կալոց են, եւ նա սեւէ զերեսս նոցա, որ թիւրեն զԱստուած գրեալ դատաստանն:

Յայսոսիկ երկոտասան գլուխս պարունակեալ եղեւ պատճառ գրոցս դատաստանի: Եւ զի երկոտասանն բաղկանայ յերկուց վեցից, եւ վեցն կատարեալ թիւ է: Եւ թէ որպէս լինի վեցն կատարեալ թիւ. Առաջինն՝ զի երիւքն ի կոճատէ եւ երկկաւն ի դարէ բաղկանայ. եւ ամենայն թիւ դար է եւ կոճատ:

Երկրորդ՝ զի ժամանակ է արարչութեան:

Երրորդ՝ զի չափ է շարժման մարմնոյդ:

Չորրորդ՝ զի թիւ է ներգործութեան մարմնոյ:

Հինգերորդ՝ զի ծնանի զայլ երկարսն:

Վեցերորդ՝ զի ի կողմանց իւրոց յանկի եւ կրկնելով ծնանի զերկոտասան թիւն, եւ երկոտասանն, ի կողմանց իւրոց զուգեալ, ծնանի զվեցտասանն, զերկուս կատարեալս՝ զտասն եւ զվեց: Եւ է խորհուրդ երկոտասան առաքելոցն՝ դատաւորաց աշխարհի, զի նոքա զայլս ծնան դատաւորս եկեղեցոյ: Զի եւ դար ունի վեցեակ եւ կոճատ, որ է ներգործական եւ կրական: Եւ զի դատաւորաց է ներգործել, եւ կրել՝ դատելոց:

Ի սոյն թիւ եղեւ գալուստն Քրիստոսի՝ դատաւորին երկնաւորի, զոր եւ ի վեցից վշտաց փրկեաց զարդարն, եւ նովին թուով զտանջողսն, առաքեաց Իսրայէլի տապարոք:

Այսոքիկ առ այս շատ լիցի, զի ոչ զբիութիւն թուոյ առաջի արկաք քննել, այլ եթէ ոչ վայրապար եղեւ յերկոտասան գլուխս աւարտիլ գրոցս դատաստանի:

Իսկ եթէ յո՞մմէ յորդորեալ եկաք ի գրել:

Ի բազում ժամանակաց հետէ տարակուսեալ յաղագս սորին լինէի՝ խոցոտելով ի նախատելն զմեզ մերոց եւ օտարաց ազգաց: Սակայն վստահանալ ի սոյն ոչ իշխէի, քանզի գիտէի զանձին իմոյ տկարութիւնս: Իսկ այր ոմն, Պօղոս ասեն, հմուտ աստուածային օրինացն, լուաւ զայս խորհուրդ յինէն, եւ նա եւս առաւել յորդորեցաւ ի սմին, եւ սկսաւ յորդորել զմեզ ի Գրոց Սրբոց: Եւ ես ոչ այնու կամեցայ ձեռնամուխ լինել, այլ սկսայ զայլս աղաչել, որք կարողք էին եւ

գիտակք օրինացն Աստուծոյ, քանզի բազումք էին, որ զայսպիսի խորհուրդս ի գլուխ հանէին: Բայց զի զանընդունելութիւն ազգիս գիտէի, եւ վասն այնր ոչ առնուի յանձն եւ ոչ զայլ ոք կամէի աղերսել. լռեցի ապա այնուհետեւ եւ ես: Եւ զարմացեալ յաղագս այսորիկ լինէի, թէ զիա՞րդ յառաջնոց հարանցն մերոց ոչ կարգեցաւ: Եւ զնոյն գիտացեալ զպատճառ, եւ զի ոչ առաքելոց Տէրն տուաւ, եւ կամ զի ոչ ոք հրաւիրեաց եւ անձամբ ոչ ոք իշխեաց՝ զարհուրեալք ի պարսաւանաց եւ կամ ի հալածանաց ժամանակին, եւ կամ ընդ տէրութեամբ անկեալ այլոց ազգաց՝ նոցունց վարեցան դատաստանաւ:

Եւ թէպէտ ամենայն պատահեաց ըստ ժամանակիս եւ նոյն պատճառ, որպէս յաւուրսն հարցն մերոց՝ ոչ աւանդիլ գրով դատաստան, բայց յԱւետարանէն, զի եւ ոչ յառաքելոց անտի տուաւ մեզ, բայց սակայն հարկաւոր եղեւ գրել մեզ, որպէս վերագոյն ցուցաք: Եւ սկիզբն առնել այսպիսի բանիս այսպէս եղեւ:

Հանդիպեցաք առաջի տեառն Ստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի, եւ սմին իրի յիշատակ եղեւ առաջի նորա: Եւ նա յորդորեաց զմեզ՝ ասելով, թէ եւ ես փափագեմ այդմ բանի: Զնոյնն եւ մեք ասացաք նմա զմեր անկարութիւնս: Սակայն ի յորդորելն եւ ի քաջալերելն նորա՝ խորհուրդ իմն ի Հոգոյն Սրբոյ եղեւ ի մեզ, եթէ արժան է հոգեւոր հրամանի անսալ, զի եւ յԱստուծոյ լիցի կատարումն սորա, զոր խորհիմք, զնոյն եւ սկիզբն, ապա թէ ոչ՝ պատճառ լիցի կատարելոց ոմանց շարժիլ ի սոյն: Զի եւ ոչ գործ արուեստ ամենայն ի միոջէ սկսողէ աւարտեցաւ ի ըսկզբանէ, այլ ի բազմաց, զի մասնաւոր գտեալքն ժողովեալք՝ գոյացուցին զարհեստն, ըստ առակի ոստայնանկաց: Նաեւ պատշաճ ինչ վարկայ ընդոստնուլ սովաւ, եթէ յատեան մտանելոց եմ յանկաշառ եւ յանողոքելի, ըստ որում ձեռամբ իսկ գրեմ զապագայիցն նշանակ:

Եւ արդ, մի՛ ոք պարսաւանս դիցէ ասացելոցս, զի թէ տխմար ոք իցէ ուսցի, եւ թէ ամենակատար ոք եւ իմաստուն՝ զթերին լցցէ: Երկաքանչիւրոցն պատրաստ եմք սիրով ընդ առաջ ելանել:

ԳԼՈՒԽ Գ ՆՇԱՆԱԿ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՆԴԵՐՁ ԱՂԵՐՍԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԱՌ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ

Քանզի հարկաւոր է զկնի այսոցիկ սակաւուք ցուցանել զզօրութիւն առաջիկայ գործոյս, զոր եւ աղաչեմ, ո՛վ պատուական գլուխ եկեղեցեաց սրբոց տանդ Աղուանից, մի՛ վարկպարագի համարիք զհարկս հոգեւորս, զոր եդեր մեզ, զի եւ կանոնական ունի սահման գիրս դատաստանի, զոր յարմարել յայնոսիկ պարտիմք, զի յայտ լիցի չափ նորին:

Եւ արդ, այսպէս համեմատեսցուք: Կանոնական սահմանն հոգոյ է ուղղիչ, իսկ սա՝ մարմնոյ, եւ թէպէտ բաժանեալք ի միմեանց են՝ սակայն ի բազում իրս միաւորին, որպէս հոգի եւ մարմին բնութեամբ՝ երկու եւ անշփոթ խառնմամբ՝ մի, բազում անգամ ի միասին վարին մի կամօք: Վասն այսորիկ, պատահի թէպէտ միով սահմանաւ վարիլ, ոչ միմեանց լուծիչ են: Եւ զոր օրինակ անդ հմտագունից է ընտրութիւն առաջիկայ իրին, նմանապէս եւ՝ աստ: Եւ որպէս է անդ պատիժ պատուհասի յանցաւորաց եւ մեղաւորաց՝ ըստ զանազանութեան իրին, նոյնպէս եւ՝ աստ: Եւ որպէս յանդգնելոցն աստ զկնի բանդ է եւ կապանք, նոյնպէս եւ անդ բանդ է եւ կապանք բանադրանքն: Եւ զի ի վերայ արդարոց օրէնք ոչ կան կանոնաց, եւ ոչ ի վերայ ուղիղ ընթացողաց ի կենցաղս՝ դատաստանք: Եւ զի այր արդարամիտ ոչ զարհուրի ի դատաւորէն երկնաւորէ, նաեւ՝ ոչ յերկրաւորէ:

Հայցեմ եւ զի երկրորդ բան ի միտ դնել, զի եւ ոչ փոքր ինչ զմեզ օգտեցուցանէ, քանզի համօրէն է գիրս զուգընթաց զօրութեան նոցա, լինելով ըստ չափոյ, զի դիտաւորութիւն նոցա ի կարճել զմեղս է, եւ սորա՝ նմանապէս հատանել զչարս: Եւ այսոքիկ ոչ այլ ինչ է, եթէ ոչ զի համամիտ եւ համակարիս զմեզ առնիցեն, յորոց եւ հաստատի սէրն, որ է գլուխ ամենայն պատուիրանաց:

Իսկ ի չորրորդ առաքինութեան համեմատեալ՝ հաւասար է արդարութեանց, զի ի վերայ կայ երիցն մասանց, եւ այդ ըստ երրորդ բանի է:

Իսկ յարուեստաւորս՝ նմանեալ է ոսկեգործաց, որոց ոսկին յառաջագոյն ի նիւթս գործաւորի անյայտ եղեալ կայ եւ դժուարաւ ի գիւտ եղեալ գործի. եւ է ըստ չորրորդ բանի:

Հինգերորդ՝ զի զքերթողի ունի զօրութիւն՝ յապաւել եւ քերթել զաւելորդսն ամենայն:

Չափաւորապէս յայտնիկ գլուխս, իբր իմաստնոյ, տուաք տեսակս, որով եւ գիտել ունիցիք, եթէ այսոցիկ հետեւելով՝ որքան օգուտ եւ շահ հասարակաց կենացս իցէ, զի գրեթէ ամենայն պատերազմ եւ ամբոխ խռովութեան ի նուազութենէ սորա իցէ, եւ հաստատելով յեկեղեցի՝ խաղաղութեան իցէ պատճառ եւ բազում բարեկարգութեան, քանզի մինն յաստուածային շնորհաց տուեալ յեկեղեցիս, ի հին ի նորս, սա իսկ է: